



Կալիֆորնիայի Պաշտպանության և Փաստաբանության համակարգ
Անվճար հեռախոսահամար (800) 776-5746

Կալիֆորնիայի վերականգնողական վարչության Գանգատների ընտրանքներ և գործընթացների ամփոփաթերթ

Նոյեմբեր 2013թ., Հրատ. #5530.10

1. Ի՞նչ կարող եմ անել, եթե խնդիրներ ունեմ իմ (DOR, Department of Rehabilitation) խորհրդատուի հետ:

Ձեր առաջին քայլը պետք է լինի փորձել լուծել Ձեր DOR խորհրդատուի հետ ունեցած խնդիրը: Եթե Դուք ի վիճակի չեք լուծել Ձեր խորհրդատուի հետ ունեցած խնդիրը, ապա հանդիպում խնդրեք խորհրդատուի տեսուչի հետ: Վերականգնողական վարչության տեսուչը կարող է ի վիճակի լինել Ձեզ օգնել՝ ցանկացած խնդիր լուծելու համար: Եթե Դուք DOR-ի գործողություններից գոհ չեք, Դուք իրավունք ունեք բողոքարկելու:

2. Որո՞նք են բողոքարկման իմ ընտրանքները:

Բողոքարկման մի շարք ընտրանքներ կան՝ Դուք կարող եք վարչական վերանայում, միջնորդություն կամ արդար լսում խնդրել: Այս տարբեր ընտրանքներն առավել մանրամասնորեն կբացատրվեն ստորև:

3. Ինչպե՞ս պետք է վարչական վերանայում խնդրեմ:

Վրաչական վերանայումը վերանայման ամենացածր մակարդակն է: Եթե Ձեր մտահոգությունները չեն լուծվում Ձեր DOR խորհրդատուի կամ վերականգնողական վրաչության տեսուչի միջոցով տեղական մակարդակում, ապա Դուք կարող եք շրջանային վարչությունից վարչական վերանայում խնդրել: Դուք պետք է մեկ տարվա ընթացքում

վարչական վերանայում խնդրեք այն որոշման համար, որի հետ համաձայն չեք: Ձեր խնդրանքը պետք է ներառի՝

- Պատճառը, թե ինչու եք կարծում, որ որոշումը պետք է փոխվի. և
- Ինչ գործողություններ եք առաջարկում, որ պետք է կիրառվեն DOR-ի կողմից:

Վերնագիր 9 CCR §7353(a)(3)(A)-(B):

4. Ի՞նչ տեղի կունենա վարչական վերանայման ժամանակ:

Երբ որ շրջանի վարիչը վարչական վերանայման խնդրանք ստանա, նա կարող է որոշել վարչական վերանայման հանդիպում կազմակերպել, որտեղ Դուք կհանդիպեք շրջանի վարիչին, ով կզբաղվի Ձեր խնդրով: Այս հանդիպմանը Դուք հնարավորություն կունենաք բացատրել, թե ինչու եք կարծում, որ DOR-ի որոշումը տեղին չէր: Դուք կարող եք փաստաթղթեր և այլ փաստեր բերեք, որոնք կօժանդակեն Ձեր տեսակետը: Ձեր DOR խորհրդատուն կամ Վերականգնողական վարչության տեսուչը կարող են գալ վարչական վերանայմանը՝ DOR-ի որոշումը բացատրելու համար:

Որոշակի դեպքերում շրջանի վարիչը կարող է որոշել «արձանագրությամբ» վերանայում և որոշման կայացում անցկացնել: Շրջանի վարիչը կնայի Ձեր խնդրանքը, Ձեր գործի ֆայլը և ցանկացած փաստաթուղթ, որը Դուք ներկայացրել եք: Շրջանի վարիչն իր որոշումը կկայացնի այս արձանագրությունների հիման վրա:

Շրջանի վարիչը կորոշի, թե արդյոք DOR-ի գործողությունները տեղին են եղել և Ձեզ գրավոր որոշում կուղարկի՝ վարչական վերանայման խնդրանքի ամսաթվից սկսած 15 օրվա ընթացքում:

5. Ի՞նչ տեղի կունենա, եթե ես գոհ չլինեմ Վարչական վերանայման որոշումից:

Եթե Վարչական վերանայման որոշումը Ձեզ չգոհացնի, Դուք կարող եք միջնորդություն և/կամ արդար լսում խնդրել: Դուք պետք է այս

խնդրանքը **ներկայացնեք Վարչական վերանայման որոշման կայացման ամսաթվից սկսած 30 օրվա** ընթացքում: Վերնագիր 9 CCR §7353(f):

6. Վարչական վերանայումը պարտադիր է:

Ոչ: Վարչական վերանայման գործընթացն ընտրանքային է: Դուք կարող եք բաց թողնել Վարչական վերանայումը և անհապաղ արդար լսում և/կամ միջնորդություն խնդրել: Վերնագիր 9 CCR §7351(c): Սակայն, հնարավոր է, որ օգտակար լինի գործել DOR-ի վարչական վերանայման գործընթացի միջոցով՝ նախքան միջնորդություն կամ արդար լսում խնդրելը: Շատ խնդիրներ կարող են լուծվել տեղում, ոչ պաշտոնական մակարդակում և շատ ավելի արագ՝ Վարչական վերանայման գործընթացի միջոցով:

7. Ինչպե՞ս պետք է միջնորդություն խնդրեմ:

Դուք պետք է միջնորդություն խնդրեք մեկ տարվա ընթացքում այն գործողության համար, որի հետ համաձայն չեք: Եթե Դուք ստացել եք Վարչական վերանայման որոշումը, Դուք պետք է Միջնորդություն խնդրեք Վարչական վերանայումն ստանալու ամսաթվից սկսած 30 օրվա ընթացքում: Միջնորդության խնդրանքները պետք է ներկայացվեն DR 107 ձևաթղթով: Դուք սա կարող եք նաև առցանց գտնել՝ <http://www.rehab.cahwnet.gov/Appeals/FairHearForms.html#DR107>:

Եթե երկու կողմերը համաձայն են Միջնորդության հետ, ապա Միջնորդությունը կարող է անցկացվել բոլոր կողմերի համար հարմար ժամանակ և վայրում՝ 25 օրացուցային օրվա ընթացքում՝ սկսած այն պահից, երբ Միջնորդության համակարգողն ստանա Ձեր խնդրանքը: Վերնագիր 9 CCR §7353.6(b)-(c). Դաշնային կանոնակարգերի օրենսգիրք, 34-րդ բաժին (34 C.F.R., Code of Federal Regulations) §361.57(d):

8. Միջնորդությունը պարտադիր է:

Ոչ: Միջնորդությունը նույնպես ընտրանքային է: Դաշնային կանոնակարգերի օրենսգիրք, 34-րդ բաժին (C.F.R.) §361.57(d)(2)(i): Դուք կարող եք որոշել բաց թողնել Միջնորդությունը և ուղղակիորեն

անցում կատարել արդար լսմանը: Բացի այդ, DOR-ից չի պահանջվում մասնակցել Միջնորդությանը. DOR-ը կարող է որոշել, որ ինքը չի ցանկանում մասնակցել Միջնորդության գործընթացին: Վարչական վերանայման գործընթացի նման, Միջնորդությունը չի հետաձգում արդար լսման իրավունքը: Վերնագիր 9 CCR §7353.6(b):

9. Ի՞նչ տեղի կունենա Միջնորդությանը:

Միջնորդությանը Դուք կհանդիպեք անկողմնակալ միջնորդի և DOR-ի ներկայացուցչի: Միջնորդը կփորձի օգնել Ձեզ և DOR-ին՝ լուծելու Ձեր տարաձայնությունը և համաձայնության գալ: Եթե Դուք միևնույն ժամանակ և՛ Միջնորդության և՛ Արդար լսման համար դիմում եք ներկայացրել և ի վիճակի եք Միջնորդությանը լուծել բոլոր առկա խնդիրները, ապա Արդար լսումը կչեղարկվի:

Միջնորդությունը գաղտնի գործընթաց է: Դա նշանակում է, որ Միջնորդությանը հրապարակված ցանկացած տեղեկատվություն հետագայում չպետք է քննարկվի Արդար լսմանը կամ դատական գործում:

10. Ինչպե՞ս պետք է Արդար լսում խնդրեմ:

Դուք կարող եք նաև Արդար լսում խնդրել Ձեր DOR խնդրի առնչությամբ՝ Միջնորդության փոխարեն կամ ի հավելումն դրա: Դուք պետք է Արդար լսման Ձեր խնդրանքը ներկայացնեք մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն թվականից, երբ Դուք ստացել եք գործողության մասին որոշումը, որի հետ համաձայն չեք: Վերնագիր 9 CCR §7354(a)(1): Ինչպես վերևում նշվեց, եթե Դուք Վարչական վերանայում խնդրեք, ապա Դուք պետք է Արդար լսում խնդրեք Վարչական վերանայման որոշումից սկսած 30 օրվա ընթացքում:

Արդար լսումը պետք է անցկացվի Ձեր գրավոր խնդրանքից սկսած 60 օրվա ընթացքում, եթե չհամաձայնեք հետաձգել: Վերնագիր 9 CCR §7354(b):

Արդար լսման խնդրանքները պետք է ներկայացվեն DR 107 ձևաթղթով: Դուք կարող եք առցանց գտնել այս ձևաթուղթը՝ <http://www.rehab.cahwnet.gov/Appeals/FairHearForms.html#DR107>:

11. Ի՞նչ տեղի կունենա Արդար լսմանը:

Արդար լսմանը Դուք հնարավորություն ունեք ներկայացնել և ապացուցել Ձեր պահանջները՝ Նախքան Վարչական օրենքի դատավորը (ALJ, Administrative Law Judge): Դուք կարող եք բերել Ձեր փաստաթղթերը, վկաներին կամ այլ ապացույցներ՝ ALJ-ին ներկայացնելու համար: Արդար լսման բողոքները , որոնք հայցվել են DOR դիմորդների կամ հաճախորդների կողմից, լսվեն անկողմնակալ պատասխանատու անձի կողմից, ով ALJ-ի ցանկում է Ընդհանուր ծառայությունների վարչությունից, վարչական լսումների գրասենյակից (OAH, Office of Administrative Hearings): ALJ-ն որոշում կկայացնի Արդար լսումից հետո 30 օրվա ընթացքում: Վերնագիր 9 CCR §7358:

12. DOR կարո՞ղ է կրճատել այն ծառայությունները, որոնք ես ստանում եմ, մինչև որոշման կայացումը:

Ոչ: Մինչև վարչական վերանայումն ընթացքի մեջ է կամ ավարտված կամ մինչև վարչական լսումների գրասենյակը որոշում տա, DOR-ը Նպատակ չունի ժամանակավորապես դադարեցնելու, կրճատելու կամ դադարեցնելու ցանկացած ծառայություն, որն արդեն տրամադրվում էր IPE-ի ներքո: Երկու բացառություններն են. եթե անձը խնդրում է, որ ծառայությունը ավարտվի կամ DOR-ը որոշում է, իր խաբեություն կամ այլ հանցավոր վարք է եղել անձի կողմից: Վերնագիր 9 CCR §7351(e):

13. Ի՞նչ տեղի կունենա, եթե ես գոհ չլինեմ Արդար լսման որոշումից:

Եթե Դուք գոհ չլինեք Արդար լսումից հետո կայացված որոշումից, Դուք իրավունք ունեք Կալիֆորնիայի Գերագույն դատարանում հանձնարարագրի հրամանի միջնորդություն ներկայացնել վեց ամսվա ընթացքում:

14. Ես կարո՞ղ եմ ընտանիքիս անդամին խնդրել ինձ ներկայացնել Միջնորդությանը կամ Արդար լսմանը:

Դուք կարող եք որևէ մեկին մատնանշել՝ լինելու Ձեր լիազորված ներկայացուցիչը և Ձեզ ներկայացնելու Ձեր Միջնորդության կամ Արդար լսման ընթացքում: Դուք կարող եք ընտանիքի անդամի, ընկերոջը կամ

այլ փաստաբանի խնդրել Ձեր լիազորված ներկայացուցիչը լինել:
Լիազորված ներկայացուցիչը պետք է լրացնի DR 108 ձևաթուղթը՝
Նախքան Ձեզ ներկայացնելը: Այս ձևաթուղթը մատչելի է հետևյալ
հղումով՝

<http://www.rehab.cahwnet.gov/Appeals/FairHearForms.html#DR107>.

**15. Ի՞նչ տեղի կունենան, եթե ես չեմ կարող անգլերեն
կարդալ կամ եթե լսողության կամ տեսողության
խնդիր ունեմ:**

Դուք կարող եք խնդրել, որպեսզի ծանուցումները և որոշումները Ձեզ
ուղարկվեն Ձեր հիմնական լեզվով կամ հաղորդակցման Ձեր
Նախընտրելի մեթոդով: Երբ Դուք առանձնահատուկ խնդրանք
ներկայացնեք, ենթադրվում է, որ DOR-ը ծանուցումները և որոշումները
Ձեզ կտրամադրի Ձեր հիմնական լեզվով կամ հաղորդակցման
Նախընտրելի մեթոդով: Կալիֆորնիայի Բարեկեցության և
հաստատությունների օրենսգիրք §19013.5(a)-(b). Վերնագիր 9 CCR
§7352(a): Եթե Դուք Նաև ցանկանում եք ծանուցումները և որոշումներն
ստանալ անգլերենից բացի մեկ այլ լեզվով, խոշոր տպագրությամբ, կամ
Բրայլով, հնարավորինս շուտ խնդրեք այն առանձնահատուկ լեզուն կամ
ձևաչափը, որի կարիքն ունեք: Դուք կարող եք ծանուցումներ ստանալ
տարբեր լեզուներով և/կամ ձևաչափերով, երբ Դուք Վարչական
վերանայում, Միջնորդություն կամ Արդար լսում եք խնդրում:

**16. Ես կարո՞ղ եմ թարգմանչի ծառայություններ կամ
կարդացողի կամ այլ հարմարություններ ստանալ
Վարչական վերանայման, Միջնորդության կամ Արդար
լսմանը:**

Այո. Եթե Դուք անգլիախոս չեք, խուլ եք, լսելու, խոսքի խնդիրներ ունեք,
կույր եք կամ տեսողության խնդիրներ ունեք, թարգմանչի կամ
կարդացողի ծառայությունները կամ լսելու աջակցող սարքեր պետք է
տրամադրվեն Ձեզ: Այս ծառայությունները տրամադրվում են Ձեր
խնդրանքի հիման վրա: Վերնագիր 9 CCR §§ 7353(c), 7353.6(c),
7354(d)(3): Եթե հնարավոր է, Նախապես խնդրեք ցանկացած
հարմարություն, որի կարիքն ունեք: Դուք կարող եք հարմարություններ

խնդրել, երբ Վարչական վերանայում, Միջնորդություն կամ Արդար լսում եք խնդրում:

17. Ես կարո՞ղ եմ Վարչական վերանայման, Միջնորդության կամ Արդար լսման հանդիպմանը գնալու համար տանից և դեպի տուն փոխադրում խնդրել:

Դուք կարող եք DOR-ին խնդրել փոխադրում տրամադրել դեպի Վարչական վերանայման կամ Միջնորդության հանդիպումը: Վերնագիր 9 CCR §7353(d), 7353.6(d): Թեև կանոնակարգերում մասնավորապես չի հասցեագրվում այդ մասին, Դուք կարող եք ցանկանալ DOR-ին խնդրել, թե արդյոք նրանք Ձեզ փոխադրում կտրամադրեն՝ Արդար լսման մեկնելու համար, եթե դրա կարիքն ունենաք:

Աջակցության համար խնդրում ենք դիմել Ձեր (CAP, Client Assistance Program) փաստաբանին՝ 800-776-5746 հեռախոսահամարով: CAP փաստաբանը կարող է ի վիճակի լինել օգնել Ձեզ՝ լուծելու Ձեր DOR-ի հետ ունեցած խնդիրները:

Disability Rights California-ն ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկի համար այցելե՛ք՝

*[http://www.disabilityrightsca.org/
Documents/ListofGrantsAndContracts.html](http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html).*